

Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման  
Միացեալ Մարմնի

Աշխատանքային Ուղեցոյց

Վերանայուած Յունուար 2012

## **ՆԱԽԱԲԱՆ**

Վերջին տասնամեակին, Լու Անճելըսի հայ համայնքին համար սովորութիւն դարձած է, Ցեղասպանութեան ոգեկոչումը կատարել գաղութի հիմնական կազմակերպութիւններու ներկայացուցիչները կազմուած Միացեալ Մարմնի միջոցով: Այս մարմնին ընդհանրապէս մաս կազմած էին շուրջ տասը կազմակերպութիւններ՝ երեք քաղաքական կուսակցութիւնները, չորս կրօնական յարանուանութիւնները եւ հիմնական բարեսիրական ու հայրենակցական միութիւնները:

Ապրիլ 2010ին, Յայկական Ցեղասպանութեան 95-ամեակի ոգեկոչումը կատարուեցաւ դարձեալ Միացեալ Մարմնին կողմէ, ի տարբերութեամբ, որ Միացեալ Մարմնին միացած էին նաեւ բազմաթիւ բարեսիրական ու հայրենակցական միութիւններ: Ինչպէս միշտ, Միացեալ Մարմնի կազմաւորումը տեղի ունեցաւ Յունուար-Փետրուար ամիսներուն, այսինքն Ապրիլ ամսուայ նախօրեակին, ինչ որ ժամանակի առումով բաւարար չէր հիմնական ծեռնարկներու կազմակերպման համար:

Կազմակերպական առումով, առաւել արդիւնաւետութեան հասնելու եւ անքաղծալի թերացումներուն առաջը առնելու նպատակով, Միացեալ Մարմնի առաջարկին ընդառաջելով, մասնակից կազմակերպութիւնները հաւանութիւն տուին, որ Միացեալ Մարմնի գործունեութիւնը չդադրի Յայկական Ցեղասպանութեան ոգեկոչումի յաջորդող ամիսներուն, այլ ան շարունակէ գործել ամբողջ տարուան ընթացքին եւ աշխատանք տանի նախապատրաստելու յաջորդ տարուայ Ցեղասպանութեան Ոգեկոչման ծեռնարկները:

Այս հասկացողութեամբ ու մասնակից կազմակերպութիւններու որոշումով հիմք դրուեցաւ Ցեղասպանութեան Ոգեկոչման Լու Անճելըսի Միացեալ Մարմնի տարեկան գործունեութեան:

## **ՆՊԱՏԱԿ**

Միացեալ Մարմնինը, իր տարեկան գործունեութեան լիազօրումը ստանալէ ետք, իր կարգին ըննարկեց իր գործունեութեան տարողութիւնն ու անմիջական նպատակները եւ նպատակայարմար գտաւ.-

- Տարուայ ընթացքին կազմակերպել Ցեղասպանութեան նուիրուած գիտաժողովսեր ու սեմինարներ եւ պատրաստել Ցեղասպանութեան վերաբերեալ քարոզչական նիւթեր:
- Նախապատրաստել յաջորդ տարուայ Ցեղասպանութեան Ոգեկոչման միջոցառումները:
- Աշխատանք տանիլ ընդգրկելու նորանոր կազմակերպութիւններ ու միութիւններ Միացեալ Մարմնի մէջ:

Միացեալ Մարմնինը իր ըննարկումներու ընթացքին յարմար գտաւ, որ Ցեղասպանութեան ոգեկոչման իր գործունեութեան կողքին նախաձեռնել նաեւ, այսպիսի միջոցառումներ, որոնք ըստ եռութեան կը կրես համահայկական բնոյթ եւ բացարձակապէս կը ծառայեն համահայկական շահերու, ինչպէս նաեւ կը վայելեն կազմակերպութիւններու մեծամասնութեան հաւանութիւնն ու աշակցութիւնը:

## **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՂԵՑՈՅՑ**

Միացեալ Մարմինը լաւագոյնս կազմակերպելու համար իր գործունեութիւնը, որոշեց որդեգրել աշխատանքային ուղեցոյց մը, ուր կը յստակացուին՝

- Մասնակից կազմակերպութիւններու ներկայացուցչական ձեւաչափը
- Ղեկավարման ու հիմնական որոշումներու կայացման եղանակը
- Գործնական աշխատանքներու կազմակերպումը
- Միացեալ Մարմին նիւթական գործունեութեան տարրողութիւնը

### **Մասնակից կազմակերպութիւններուներկայացուցչութեան ձեւաչափ**

Միացեալ Մարմին մաս կրնան կազմել Լու Անճելըսէն ներս գործող ուժու գործուն միութիւն կամ կազմակերութիւն եւ իր մասնակցութիւնը բերել անոր ժողովներուն ու աշխատանքներուն: Միացեալ Մարմին անդամ որեւէ կազմակերպութիւն իրաւունք ունի մաս կազմելու երկամսեայ յաճախակիութեամբ կազմակերպուտդ Միացեալ Մարմին Ընդհանուր ժողովներուն՝ քննարկելու համար ներկայացուած հարցերը իրենց ընդհանրութեան մէջ եւ կայացնելու որոշում Միացեալ Մարմին անունով:

Միացեալ Մարմին Ընդհանուր ժողովին ներկայացուած առաջարկներու վերաբերեալ որեւէ կազմակերպութեան ներկայացուցչէ իրաւունք ունի հանդէս գալու

- ա. լուսաբանական հարցումով,
- բ. բարեփոխութեան առաջարկով, եւ
- գ. դրական կամ բացասական քննադատութեամբ:

Միացեալ Մարմին Ընդհանուր ժողովի բոլոր որոշումները իրենց քննարկման աւարտին կը որդեգրուին համախոհութեամբ: Երբ ժողովը դժուարութեան կը հանդիպի առաջարկը կամ բանաձեւը համախոհութեամբ որդեգրելու, ապա այդ կը դրուի քուեարկութեան: Զուեարկութիւնը յաջողած կը համարուի երբ առաջարկ/բանաձեւը կը ստանայ ներկայ կազմակերպութիւններու նախօրոք ճշդուած քուեներու 2/3 մեծամասնութիւնը (ձեռնպահներու եւ չքուեարկողներու թիւը դուրս կը բերուի ընդհանուր գումարէն):

### **Ղեկավարման ու Հիմնական Որոշումներու Կայացման Եղանակ**

Ընդհանուր ժողովն անկախ, կիսամսեայ հերթականութեամբ կը գումարուին նաեւ Միացեալ Մարմին Դիւանի ժողովները, ուր իրենց մանրամասնութեան մէջ ու գործնականացման հեռանկարով կը քննարկուին ու կը մշակուին Միացեալ Մարմին Ընդհանուր ժողովն քսած ընդհանրական բնոյթի առաջարկները:

Միացեալ Մարմին Դիւանը կազմուած է

- ա. համահայկական բնոյթի կառոյցներու ներկայացուցիչներով (ազգային կուսակցութիւններ, կրօնական համայնքներ, համագաղութային միութիւններ),
- բ. համայնքի տարբեր հատուածներու հետ յարաբերութիւն մշակելու կարող անձնաւորութիւններով, եւ
- գ. աշխատանքային խումբներու ատենապետներով:

Միացեալ Մարմին Դիւանը ունի ընտրովի քարտուղարութիւն եւ ատենապետութիւն ա. քարտուղարութիւնը կազմուած է քարտուղարէ, գանձապահէ եւ կապի քարտուղարէ բ. ատենապետութիւնը կազմուած է երեք անձերէ, որոնք ժողովը կը վարէն փոխնիփոխ

Միացեալ Մարմին Դիւանի բոլոր որոշումները իրենց քննարկման աւարտին կը որդեգրուին համախոհութեամբ: Երբ ժողովը դժուարութեան կը հանդիպի առաջարկը կամ բանաձեւը համախոհութեամբ որդեգրելու, ապա այդ կը դրուի քուեարկութեան: Զուեարկութիւնը յաջողած կը համարուի երբ առաջարկ/բանաձեւը կը ստանայ Դիւանի անդամներու 2/3 մեծամասնութիւնը (ձեռնպահներու եւ չքուեարկողներու թիւը դուրս կը բերուի ընդհանուր գումարէն):

## **Գործնական աշխատանքներու կազմակերպում**

Աշխատանքներու մասնագիտական մակարդակի ծրագրաւորման ու գործադրման նպատակով Միացեալ Մարմինի Դիւանը կը ստեղծէ աշխատանքային կամ մասնագիտական խումբեր:

Աշխատանքային խումբերու պատասխանատուները կը հանդիսանան լիիրաւ անդամներ Միացեալ Մարմինի Դիւանին:

Աշխատանքային խումբերուն մաս կրնան կազմել.-

- Տարբեր կազմակերպութեաններու ներկայացուցիչներ առանց թիւի սահմանափակումի
- Անհատ մտաւորականներ կամ մասնագիտութեանց տեր անձնաւորութիւններ, որոնք կրնան հրաւիրուիլ մաս կազմելու որեւէ աշխատանքային խումբի:

## **Միացեալ Մարմինի նիւթական գործունեութեան տարողութիւնը**

1. Որեւէ կազմակերպութեան մասնակցութիւն Միացեալ Մարմին կը դառնայ վաւերական,  
ա. Երբ Միացեալ Մարմին Դիւանի կը հաստատէ դիմում կատարողի  
անդամակցութեան մակարդակն ու համապատասխան տարեկան սակը  
բ. Երբ, տուեալ կազմակերպութիւնը կը վճարէ իր վրայ դրուած տարեկան սակը:
2. Այն կազմակերպութիւնը որ չի վճարեր կամ չի նորոգեր իր տարեկան  
սակը կը գրկուի Միացեալ Մարմին անդամակցութենեն:
3. Կազմակերպութիւնները կը վճարեն անդամակցութեան սակ  
համապատասխան իրենց կազմակերպական կարգավիճակին  
հետեւեալ ցուցատախտակին համաձայն.-

-	Երիտասարդական Եւ Ռւսանողական միութիւններ Մշակութային Եւ Մարզական ակումբներ/խումբեր	\$150
-	Հայրենակցական միութիւններ, Հասարակական Կազմակերպութիւններ օրինակ՝ Տարօնի հայրենակցական միութիւն, ՀԱՍԿ	\$300
-	Արհեստագիտական կազմակերպութիւններ օրինակ՝ Armenian Medical Assoc., Armenian Film Foundation	\$400
-	Արտերկրի հայրենակցական միութիւններ օրինակ՝ Իրանահայ, Իրաքահայ, Պոլսահայ	\$750
-	Բարեխորական Հիմարդամներ, Ֆոնստեր օրինակ՝ Armenian Educational Foundation	\$750
-	Համագաղութային Կազմակերպութիւններ (բազմամասնաճիւղ) օրինակ՝ ՀԲԸՆ, ՀՕՄ, ՀՍԸՆ	\$1000
-	Կրօնական Յարանուանութիւններ օրինակ՝ Անաքելական, Կաթողիկէ, Աւետարանական	\$1500
-	Քաղաքական Կուսակցութիւններ Հ.Յ.Դ., Ռ.Ա.Կ.	\$1500

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՔՆԵՐ

1. Միացեալ Մարմնի Ընդհանուր ժողովին մաս կրնայ կազմել շրջանին ներս գործող այն կազմակերպութիւնը, որ ունի
  - առնուազն 25 անդամներ
  - առնուազն երեք տարուայ պետական պաշտօնական գրանցում,
  - ընտրովի վարչութիւն,
  - մամուլի ճամբով հանրածանօթ դարձած գործունեութիւն,
2. Միացեալ Մարմնի գործունեութեան վերաբերող որեւէ առաջարկ որոշումի կը վերածուի, եթե այդ իր ընդհանրութեան մէջ ընսարկումի կ'ենթարկուի եւ կը որդեգրուի Միացեալ Մարմնի Ընդհանուր ժողովին կողմէն: Ընդհանուր ժողովին կողմէ որդեգրուած որեւէ առաջարկ պետք է փոխանցուի Միացեալ Մարմնի Դիւանին, որ իր կարգին հարցը համապարփակ ընսարկումի ենթարկել ետք կ'որոշէ անոր իրականացման հիմնական տուեալները, ինչպէս՝ տարողութիւնը, ժամանակացոյցը, պիւտնեն: Ապա, Մարմնի Դիւանին կողմէ նախագծուած աշխատանքները, առ ի գործադրում, կը փոխանցուին համապատասխան աշխատանքային յանձնախուսքին կամ յանձնախումբերուն:
3. Միացեալ Մարմնի սոյն աշխատացոյցին վրայ բարեխումներ կատարել կարելի է, իւրաքանչիւր տարուայ Յունուար ամսուան կայանալիք Միացեալ Մարմնի Ընդհանուր ժողովի ընթացքին:
4. Միացեալ Մարմնի Դիւանի անդամներու վերանշանակում կը կատարուի իւրաքանչիւր տարուայ Յունուար ամսուան կայանալիք Միացեալ Մարմնի Ընդհանուր ժողովի ընթացքին: